




ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՏԵԺՈՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ
ՋԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ՎԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՃԱԲԱԹ, 5 ՄԱՐՏ 1911

ԹԻԻ 8

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեն ՊԱՀՈՑ ԱՌԹԻԻ ԿՐՕՆ. Խորհրդածուծիւններ. —

Բ. ԶԱՀԱՆԱԿ ԿԵԱՆՔԸ	ԲԱԲԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՎՃԱԿԻՆ ԳԵՂԵՅԿԱԾԻՒՆԵՐ	ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ
Քաջաղիքիչ տեսարան	ՍՈՒՐԷՆ Ծ. Վ. ԳԱԼԷՄԵԱՆ
ԵՐԻՏՅԱՆՈՐԴԻ ՄԸ ՀՈԴԵԿԱՆ ՎՐԴՈՎՈՒՄՆԵՐԸ. — Նամակներ	
առ Հրայր (Ա.)	ՋԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ
ՐԺԺԱՄ ԱՆՔԵՐ	ԼՈՒՍՆԹԱԳ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Շաբթուան լուրեր.	

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ "ՇԱՆԹ",

9, Ճամի Գաբուսու, 9

ՀԱՀԱԹ Ի Ա

ՏԱՋԱՐ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 5 ՄԱՐՏ 1911

ԹԻԻ 8



ԳԵՐ. Տ. ՎԱՀՐԱՄ Ս. ԱՐՔԵՊ. ՄԱՆԿՈՒՆԻ

ՊԱՏՐԻԱՐԺԱԿԱՆ ԱՐԺԱՆԸՆՏԻՐ ՏԵԼԱՊԱՆ

Մ Ե Ծ Պ Ա Հ Ո Ց Ա Ռ Թ Ի Ի ԿՐՕՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Բ.

ԶՂՋՈՒՄԻ ԿԵԱՆՔԸ

Զեղի անձանթ չէ Անառակ որդւոյն պատմութիւնը. կ'ենթադրեմ որ ամէնքդ ալ գիտէք զայն, եւ կը յիշէք այն սիրուն անառակը, որ իր անսիրտութեան բոլոր սխալը հետեւանքներուն մէջ կը սթափի վերջապէս, եւ կը վճռէ իր խեղճ ու կրակ կեանքին վերջ տալ... Զղջումով:

Բայց չեմ գիտեր թէ Անառակի պատմութեան մէջ ձեզ համար ամէնէն հետաքրքրական դէպքը կամ դէմքը ո՞րն է: Արդեօք Անառակին հայրը՝ որ համակերպած օրէնքի տրամադրութեան. կը կատարէ իր պզտիկ տղուն խնդիրքը. արդեօք նոյն ինքն Անառակին կեանքը որ թարմութեան թափին մէջ ամէն բան պայծառ կը կարծէ տեսնել, ամէն բան ուղիղ իր խօսքին եւ դործքին մէջ, ամէն բան կարելի իր երազային կեանքի տառերներուն մէջ, որոնք սակայն հաստատուն կը թուին իրեն եւ տեւական. արդեօք Անառակին մեծ եղբայրը, որ իր տանին ծառայութիւններուն նուիրուած եւ հպարտ իր համա-կերպող պարտաճանաչութեան վրայ, շատ տարօրինակ կը գտնէ իր հօր ներսը ընթացքը՝ ցոյս ու շուայտ Անառակի մը վերադարձին: Թերեւս դուք ալ պահ մը մտահարուած էք գրաւութիւն եւ հրապարակութիւն գտնելու եւ անյիշատի հօր գգունութեամբ եւ համբոյրներով, եւ ներողամտութեան սո՛ւ անհամեմատելի մարմնացումով, որ բան մը չտեսնէ խրտուցիչ իր անսիրտ անառակ զաւակի կեանքին վրայ, որ բան մը չյիշէր անոր անցեալէն, միայն եւ միայն կը հրճուի, կ'ուրախանայ իր զաւակի վերադարձին համար: Կը խոստովանիմ որ Անառակի պատմութեան մէջ ցցուող այս ցոյտուն դէպքերն եւ դէմքերը իրապէս ուշադրաւ են, եւ անոնց իւրաքանչիւրը կը խտացնէ իր մէջ իրականութիւններ մարդկային կեանքին: Բայց ինչ որ մաս-

նաւորապէս ուշա կը դրաւէ այս անգամ Անառակի պատմութեան մէջ, այն ալ նոյն ինքն Անառակին հոգեբանական կացութիւնն է, այսինքն այն ներքին վիճակը, ուր նա շատ յատակ կը տեսնէ ինքզինքը, իր անցեալ եւ ապագայ կեանքերը քով քովի կը պարզուին իր աչքերուն առջեւ, եւ այս վիճակին մէջ է, որ խորհրդածեալ որոշւողութեամբ մը կը վճռէ իր ընկերքը. այսինքն՝ թէ ես սխալ ճամբայ մը բռնեցի. այդ սխալ ճամբան զիս բերաւ մինչեւ հոս, հո՛ս՝ այս խողարածի վիճակը, իմ փնտառած աշս չէր. ես կը կարծէի աւելի երջանիկ ըլլալ. սխալած եմ. պէտք է ուրեմն ես դառնամ ուղղակի այն ճամբէն որ զիս հոս բերաւ. պէտք չէ խոտոր ճամբայ մը բռնեմ, ուղղակի ա՛յս, այս եկած ճամբէս պէտք է երթամ, եւ պէտք է որ շուտ ալ երթամ: Եւ հաստատ իր որոշման եւ վճռին վրայ՝ կը վերադառնայ Անառակը ճամբէն եւ կը համար իր հայրենի տունը:

Մնացածը գիտենք:

Քրիտանեա՛յք. Անառակի պատմութեան մէջ ահա՛ հոգեբանական այս վիճակը, ուրիշ խօսքով Անառակին այս զղջման կեանքն է, որ այսօր մասնաւորապէս կը դրաւէ ուշա, եւ ես կը փափաքեմ որ մարդուս կեանքին մէջ շատ սովորական համարուած այդ վիճակը դրաւէ ձեր ալ ուշադրութիւնը: Երջանիկ կեանք մը հետապնդողներու համար մահաւանդ՝ իրական օգուաներ կան զղջման կեանքի վերաբերութեան մէջ: Ես ձեզի բացատրեցի անցեալ անգամ, թէ երջանիկ կեանքը նոյն իսկ մարդուն ձեռքն է. երբ մարդը լուր կը ճանչնայ ինքզինքը, երբ հաւատարիմ է ան իր բնութեան եւ հոգեբանական կարողութիւններուն, երջանիկ կ'ըլլայ: Սխալը երջանիկ չընէր մարդը, որչափ ալ տառջին անգամ այդ սխալը չտեսնէ կամ չտեսնել ձեռացնէ ան՝ զգլխած ստոր հրապարակէն եւ հեռաւոր սկեզոծեալ երազներու կախորդանքէն: Եւ սակայն կեանքը տա հասարակ այդպիսի սխալներով է որ կը դառնանայ, եւ շատեր ու շատեր չեն ուղեր ճանչնալ իրենց սխալները, չեն ուղեր

Անտառակին պէս զղջալ իրենց բրածին վրայ, եւ վերադառնալ ուղղակի միեւնոյն ճամբէն՝ առաջուան երջանկութիւնը ձեռք բերելու համար: Սխալը ճանչնալ՝ պղտիկութիւն մըն է այդպիսիներու համար, սուկունութիւն, տեւականութիւն չունենալ է, նկարագրի բոլորով բանէ զուրկ ըլլալ է Զղջումն կեանքը: — Բայց՝ չեղանք անգամ մըն ալ, թէ զղջման կեանքին մէջ է նոյն իսկ մարդու երջանկութիւնը:

Եթէ զղջումը իր կրօնական հազուադէպ շատ խորթ կը հնչէ ականջներու, հոգի չէ, ես թոյլ կուտամ որ պահ մը մերկայնէք զայն իր սեւ եւ խորհրդաւոր գգեսաներէն: Համարձակօրէն հեռացուցէք զայն ուրիմի պահ մը իր ինկուէտ միջնորդութիւն, եւ ամփոփուեցէք ձեր մէջը, քննեցէք, վերլուծեցէք ձեր հոգեկան առաջնապալից վիճակները երբ սխալած էք, երբ զիտէք ու համարում էք՝ որ այսպէս կամ այնպէս Անտառակ որդիի վիճակին մէջ կը գտնուիք: Այսպիսի քննութիւն մը ամէն օր պէտք է ընէ մարդ իր կեանքին եւ գործունէութիւններուն վրայ: Վասն զի ասոր մէջ է իր փրկութիւնն ու երջանկութիւնը: Զղջումը նոյն ինքն ինքնաճանաչութիւնն է: Մարդու բնական աւելի կը ճանչնայ ինքզինքը: Մեր արտաքին երեւոյթները կրնան խաբել ուրիշները, անոնք կրնան ասորքեր կարծիք եւ դադափար չինել մեր վրայ, տարբեր մեր իսկ կըսէին ու արժանիքէն: Եւ շատեր նոյն իսկ կրնան այս կեղծ եւ անհաստատ վիճակին մէջ լաւ զգալ իրենք զիրենք: Ի՞նչ օգուտ ոտկոյն, ցորչափներքին կեանքին երեւոյթները չեն սոյգ արտաքինները, դժբախտ է մարդը՝ դժբախտ է այսօր ալ վաղն ալ: Դժբախտ է երբ ուրիշներ բախտաւոր կը կարծեն զինքը:

Ինքնաճանաչութիւնը կամ զղջումը, ուրիմի, անհրաժեշտ պայման մըն է ապրելու համար ինչպէս որ ենք, կամ թէ ինչպէս որ պարտաւոր ենք ըլլալ: Զղջումը կրօնական ըլլալէ յառաջ մարդկային է, հոգեկան պէտք մըն է, եւ եթէ կրօնքը այդ կուտայ ամբողջ, այսինքն երբ կրօնքը կը զարգացնէ ինքնաճանաչութեան այդ զգացումը մարդուն ներքը, կ'ուզէ

ասով բարձր բունել նոյն ինքն մարդը: Բայց՝ իր արժանիքին, իր հարազատ կարողութիւններուն գործունէութեան կատարին վրայ:

Եթէ ուղիղ են այս խորհրդածութիւնները, եւ վստահ եղիք որ ուղիղ են, կը հետեւցնենք, թէ Զղջումը

Ա. Պղտիկութիւն չէ:

Բ. Ազնիւ եւ առկուճ նկարագրի ապացոյց մըն է:

Գ. Երջանիկ կեանքի ազդակ մըն է:

Ա.

Զղջումը պզտիկութիւն չէ: — Մարդիկ առ հասարակ սխալ գաղափար ունին մեծութեան վրայ: Կը կարծեն թէ իրենց սխալները ճանչնալ՝ բան մը կը պակսեցնէ իրենց յաւակնութիւններէն: Բայց սխալները կը պղտիկցնեն մարդը, եւ պատճառ կ'ըլլան հպարտութեան կամ ամբարտաւանութեան, եւ հպարտ կամ ամբարտաւանը չէ՝ մեծը: Ընդհակառակն մարդ որչա՛փ քիչ սխալի, այդչա՛փ կը մեծնայ: Ինքզինքը խնայողիցն ուղղափառ բարձրանայ, պիտի մեծնայ՝ աւետարանական ճշմարտութիւնը, ճշմարտութիւնն է ամէն մարդու եւ ամէն ժամանակի համար: Խոնարհիլ իր սխալները ճանչնալու, բացարձակ եւ միակ միջոցն է մեծութեան, երբ մեծութեամբ պիտի հասկընանք մարդուն անխաբար եւ իրական արժանիքին յայտնութիւնը: Այսպէս հասկըցուած մեծութիւն մը միայն կրնայ փայլիլ անհատին վրայ, եւ ազդել իր շուրջը եւ նոյն իսկ իր միջավայրին ալ վրայ: Մեծութեան յայտնի յատկութիւնն է անկեղծութիւնը: Սխալները կ'աւրին անկեղծութիւնը, եւ անոնք որ չեն զղջար, չեն ճանչնար իրենց սխալները՝ անկեղծ չեն: Եւ ի՞նչպէս կ'ուզէք որ նոյն ինքն իրենց անձին, իրենց կոխ հանդէպ անկեղծ չեղողներ՝ անկեղծ եւ մեծ ըլլային ընկերութեան մէջ:

Երջանիկ կեանքի մը ապահովութեան մէջ շատ կարեւոր պայման մըն է զղջումը կամ սխալները ճանչնալը: Վասն զի, ըսենք անգամ մըն ալ, սխալներ կը գտնուան ինքն կեանքը, կը պղտիկցնեն

մարդը, որ ինչ ալ ըլլայ՝ մեծութեան կը տենչայ. բնական լաղճանք մըն է այդ, բայց պէտք է այդ բաղճանքն ու տենչանքը ազնուացընել գիտնալ, ապա թէ ոչ կը խեղդուին անոնք սխալներու կուտակումներու տակ, եւ մարդ՝ կամայ ակամայ կը հպարտանայ եւ կ'ամբարտաւանի, եւ վերջապէս կը զգայ իր սղախկութիւնը՝ այս սխալ հասկըցումով մեծութեան վտանգաւոր սաւառնումներուն մէջ:

Հագեւանական այս վիճակը շատ սրուց կը տեսնենք Անառակի կեանքին վրայ. հապտմը չլմորեցաւ երազային կեանքի մը հեռաւոր իրականութիւններով, եւ ստիպեց շուտ զգաց՝ թէ պատրանքի մէջ է: Ծանցաւ իր սխալը, զղջաց: Պզտիկցած էր եւ մեծցաւ: Եւ այսպիսի մեծութիւն մը, որ փորձերու եւ փորձանքներու, դասն իրականութիւններու արդիւնքով ձեռք բերուած է, այլ եւս կորսուելու հաւանականութիւն չունի:

Մի՛ հեռացնէք այս պատկերը ձեր մաքէն, լաւ դիտեցէք զայն ուշադրութեամբ, ուսումնասիրեցէք զայն իր բոլոր կողմերէն, եւ տեսէք՝ թէ ինչ բանի մէջ կը կայանայ մարդու մեծութիւնը:— Հեռացէ՛ք ստիպեց սխալներէ, եւ հեռացուցէք զանոնք ձեր անհատական եւ ընկերական կեանքի մէջէն, բարձրացուցէք ձեր մեծութիւնը ձեր զղջումի կեանքին վրայ ինքնաճանաչութեան վրայ, ստուգ եւ իրական արժանիքի վրայ: Որագ աբագ հեռացէք սխալներու ճամբէն՝ Անառակին պէս. եւ պիտի տեսնէք՝ թէ չէք սղախկցած, այլ մեծցած էք, փառաւորուած էք ձեր իրական արժանիքով:

Թ.

Ձղջումը՝ ազնիւ եւ տկուր ցկարագրի ապացոյց մըն է:— Նկարագիր բառը անշուշտ ծանօթ է ձեզ: Այսօր ամէն տեղ կը հանդիպիք ատոր, գիրքերու եւ թերթերու մէջ. բոլոր մարդիկ ալ կ'ըսեն թէ ունին զայն: Նկարագիրը՝ մարդու բարոյական յայտնի եւ որոշ մէկ յատկութիւնն է, մարդուն նոյն ինքն բարքն ու վարքն է: Երբ մէկուն վրայ չեղտուած կերպով կը տեսնուի զոր օր. կամ բարեարտութիւն կամ կանոնաւոր աշխատութիւն, կամ հաստա-

տամտութիւն եւլն., այս յատկութիւնները մարդուն նկարագիրը կը կազմեն:—Որդ՝ ես կ'ըսեմ թէ զղջումը կամ սխալը ճանչնալը՝ ազնիւ եւ տկուր նկարագրի ապացոյց մըն է: Եւ միթէ ամէն մարդ չը յաւակնիր ունենալ ազնիւ եւ տկուր նկարագիր:— Անտարակոյս: Բայց սխալներու մէջ խեղդուած նկարագիր մը կ'անազնուանայ հետզհետէ եւ կը տկարանայ, կը կորսընցնէ իր տկուրութիւնը:

Ազնուութիւնը չնշանակիր անտարբերութիւն, եւ տկուրութիւն ըսել չէ յամառութիւն: Ասոնք բոլորովին տարբեր յատկութիւններ են: Եւ անոնք որ կը յամառին իրենց սխալներուն մէջ՝ տկուր նկարագրի մը ապացոյցը չեն ընծայեր, ոչ ալ անտարբեր ըլլալ սխալներու աւերումներուն՝ կրնայ բարացուցիւ ազնուական նկարագիր մը:

Ըսի թէ սխալներու մէջ խեղդուած նկարագիր մը հետզհետէ կը տկարանայ, կը կորսնցնէ իր տկուրութիւնը: Որչա՛փ ճշմարիտ է այս: Տոկուն նկարագիրը սովորութիւն եղած է համեմատել երկաթի հետ: Շատ լաւ: Բայց երկաթը կոշտ է ժանգի, եւ ժանգը կ'աւրէ երկաթի տկուրութիւնը: Տեսած էք հարկաւ երկաթի ամուր գերաններ բոլորովին ժանգոտած. եթէ չհասնիս եւ չմաքրես ժանգը՝ երկաթը կամայ կամայ պիտի մաշի, պիտի ծակուտուի սպունգի նման, եւ քիչ ետքը բոն մը պիտի չգտնես հոն, բայց եթէ իր տկուրութիւնէն զրկուած երկաթի կտորուանք, փտութիւն մը: Սխալները նկարագրին համար ժանգեր են, երբ յամառիս ատենց մէջ, անոնք կամայ կամայ կը մաշեցընեն նկարագիրդ, կ'ուտեն կ'աւրեն ատոր տկուր յատկութիւնը, եւ դուն կը տեսնես՝ թէ յամառութիւն եւ տկուրութիւն տարբեր բանի են, կը համոզուիս թէ սխալներդ, գիտակցաւոր չզղջալդ գործեցին այդ ստակալի աւերումը քու ներսդ:

Անժամեկ նկարագիր պէտք է մարդուն, երջանիկ ապրելու համար: Աշխարհը վշտի եւ ցաւէ հովիտ մըն է, ըսած են, եւ կեանքի դաւնութիւնները կարծես կ'իրաւացընեն այդ նմանութիւնը: Եւ ստույգ է որ

տհաւոր վտանգներ ու դժուարութիւններ կան կեանքի ճամբուն վրայ . բայց մարդիկ կ'ուզեն ապրիլ , եւ երջանիկ ապրիլ . մարդոց այս ուզելը , այս կոմքը՝ կրնայ իրականանալ մի միայն ագիւս եւ տոկուն նկարագրով : — Մարդ կարելի եղածին չափ իր անժանդ , այսինքն սխալներէ չուրուած նկարագրով միայն կրնայ դէմ դնել այդ դժուարութիւններուն եւ անհարթութիւններուն : Մարդ երբեք չվախնար , չվհատիր , երբ ունի այս նկարագիրը՝ հանգէտ նկարագրով եւ բարոյական ամէն ահապ դժուարութիւններու եւ դժբախտութիւններու :

Զէ՞ք զգար ուրեմն հարկ մը , պէտք մը՝ կարելի եղածին չափ զգոյշ ըլլալու , որպէս զի նկարագիրը չժանդոտի սխալներով եւ չկորսնցընէ իրեն յատուկ երկաթի տոկունութիւնը : Այսպէս ուրեմն մեր կեանքը պէտք է ըլլայ շարունակ զգման կեանքը , սրբադրութեան կեանքը : Զրկեղուած երկաթը փայլուն , ամուր եւ կարուկ կ'ըլլայ :

Սխալներու պրագորութիւնը կը ջրդեղէ նկարագիրը :

Եւ մենք կը տեսնենք որ Անառակն ալ կրցաւ այս մեծ սրբադրութիւնը ընել իր նկարագրին վրայ : Ան զգլխիչ երազներով հեռացած էր հայրենի տունէն . համարուեցաւ թէ սխալած է , եւ կեանքի յետին դառնութիւններու մէջ չվարանցաւ ցոյց ապ իր ագիւս եւ տոկուն նկարագիրը . չթողուց որ սխալները խորապէս ժանդոտեն , ծակտեն զայն , աւրին եւ փակցնեն . սթափեցաւ շուտով , զգաստացաւ զգլու մով եւ ուղղակի վերադարձաւ . այն ճամբէն , ուրկից եկած ինկած էր խոլարածի չքուորութիւններու մէջ :

Մի՛ հեռացնէք այս կենդանի դէպքն ալ ձեր ուշադրութիւնէն : Դիտեցէք հոն կեանքի հորիզոնին վրայ մարելու մօտ նորածագ արեւի մը վառվառն եւ հրաշալի պայծառութիւնը , որ զերծ ամպերու մթառտուեր սքողումներէն՝ կենդանի կը ճառագայթէ եւ յոյսերով կը լեցնէ իր ակնապիշ դիտողները :

Գ.

Զոջումը երջանիկ կեանքի ազդակ մըն է : — Եթէ զոջումը չազդակցներ մարդը , եթէ մարդ իր սխալները ճանչնալով , զոջումով կ'աղնուացնէ եւ կ'ամրացնէ իր նկարագիրը , կը հետեւի թէ զոջումը մեր կեանքը երջանկացնող ազդակներէն մէկն է :

Անպատակ , անյարայոյց , տարտամ կեանքերու վրայ չէ անշուշտ խօսքը : Մեր աչքերուն առջեւէն չկորսնցնենք Աւետարանի Անառակը : Դիտեցէ՛ք որ այս սիրուն պղտիկը , գո՛հ չէ իր կեանքէն . հայրենի տան ապահով մթնոլորտը շատ կը նեղէ զինքը , ծնողական խնամք եւ գգուանք շատ բան չեն ըսիր իրեն . ինքը կ'ուզէ երջանկութեան այդ օճախը թողուլ հեռանալ , ծնողական հակողութենէ եւ դիտողութիւնէ ազատ կեանքի մը մէջ դռնել իր երջանկութեան , րո՞ւք երազներու իրականացումը : Այս նպատակով միայն կը լքէ Անառակը իր տունը , եւ կ'երթայ... կ'երթայ , բայց ո՛ւր . անառակ կեանքի մը շուայտութիւններուն մէջ . իր անփորձութեան տխուր հետեւանքներուն , ծայրայեղ չքուորութիւններուն մէջ կուպարեայ ճանրութիւն մըն ալ կ'աւելցնէ սովը : Անառակը սակայն կորովի է , իր ներքը չէ մարած կենդանութեան կայծը . կը զիմադրաւէ , իր շուրջը փոթորկուող փորձանքներուն կուրծք կուտայ , եւ ապրելու համար չքաշուիր խողարածութենէ . հակառակ իր համակերպութիւններուն այս զբաղումն ալ կը դժգոհի իրեն դէմ , կը սլայքարի մինչեւ սովամահ կորսուելու աստիճան , եւ կը հասկնայ վերջապէս՝ թէ այս բոլորը իր սխալներուն հետեւանքներն են : — Կը խոստովանի ինքնիրեն , կը զոջայ իր ըրածներուն վրայ , եւ կը վճռէ ճողպարի մահառիթ կացութենէն : Կը հասկնայ թէ ինքը պզտիկցած է , եւ իր հայրենի տան սպասաւորները մեծցած կը տեսնէ իրենց պարտաւորութիւններու պատուանդանին վրայ . կը խոստովանի թէ իր նկարագիրը ժանդոտած է , մինչ ինքը կ'երազէր աւելի եւս փայլեցնել զայն անկախ կեանքի մը մը սաւառնումներով : Կեանքին երկու ծայրերը Անառակին ալ աչքին առջեւ կը

պարզութիւն. մէկ ծայրը երջանկութեան բոյնը, օճախը, հայրենի տունը, միւս ծայրը, ապերժանիկ կեանքի մը անկումներն ու սոսկումները: Այս երկու ծայրերը ուղիղ, շիտակ ճամբով մը միացած են իրարու: Անառակը վեր վերցուց իր աչքերը, իր անկումներուն մէջ, մտովի դնեց այդ ճամբան, հասկցաւ թէ փակուած չէ ան իր առջև. անհարթութիւններն ու դժուարութիւններն ալ չկան որ դանդաղեցնեն իր քայլերը, թօթափեց իր վրայ կոխող ծանրութիւնը, չուս չուս քալեց, եւ իր յուսացածէն աւելի երջանիկ եղաւ: Վստի վարձկան ապաստոյններու կեանքով ալ երջանիկ պիտի ըլլար. բայց տեսաւ որ, իր որդիութեան հին եւ հախկին պատիւներուն մէջ կը վերահաստատուի, հայրենի անյիշաչարութեան, ծնողական գորովի եւ խանդաղատանքի անսպասելի սղոյսութեամբ:

Կեանքի մէջ այսպիսի ճամբայ մըն է որ կը քալեն մարդիկ: Ոչ ոք թող արտնշայ իր կեանքէն, ոչ ոք թող ողբայ իր դժբախտութիւնները, երբ ինքն է իր արդարաւիշներուն պատճառը, եւ իր դժբախտութեան սերմերը նոյն իսկ իր ներսը ծրլած են ամէնէն յառաջ: Մենք մեր ոյժերէն, մեր կանխազգութիւններէն ու հաւատարմութիւններէն դուրս՝ պատահած դժբախտութիւններու առջև իսկ ազատ չենք անիծելու կեանքը՝ իբր ապերժանիկներ, երբ չենք պզտիկցած մեր սխալներուն մէջ, երբ չեն ժանդատած մեր նկարագիրները: Ահա՛ ձեր առջևն ալ գտնուած կեանքի սովորական ճամբան, քրիստոնէոյց: Պիտի ուղէի՞ք ձեր սխալներուն մէջ անդիդ մնալ, թէ վերադառնալ կորսուած երջանկութիւնը գտնելու առանց աշխատելի: Տարակոյս չկայ. պիտի ուղէիք՝ վերադառնալ. բայց պէտք է՝ ոչ քաջութիւնը զգալու համար՝ մէկդի նետել ամէն սխալ գաղափար մեր ներքին մեծութեան մասին, այսինքն՝ պէտք չէ կարծել որ զղումը կը պզտիկցնէ մարդը, պէտք չէ կարծել որ յամառութիւնը ապացոյց է սովուն նկարագրի, այլ թէ մեր ներքին մեծութիւնը, քարձրացումը, ողնուայտ մը

կախուած է մեր ինքնաճանաչութենէն, մեր ինքնաարքայութենէն, մեր զղումէն ու զղումներէն: Ասով միայն կարելի է զօրացնել մեր ներսը երջանիկ կեանքին ազդակը:— Հետեւեցէ՛ք ուրեմն Աւետարանի Անառակին:

Սկիզբէն ի վեր, շատ խորհրդաւոր կերպով, Աւետարանի մեկնիչներ Անառակի տեսիլն մէջ դիտած են մեղաւոր մարդու եւ ներող Աստուծոյ յարաբերութիւնները: Մարդիկ, քրիստոնէոյ մարդիկ, կարծես շատ կը նեղուին աստուածային հովանիին տակ, կ'ուզեն օձտել, դուրս ելլել հայրենի տունէն. սովորական, ճանձրալի կը գտնեն անոր հոգեկան վայելքներն ու հրապոյրները, եւ կ'օձտին: Աշխարհի մէջ ամէն տեղ սողոսկող տկարութիւններէ կը հրապուրուին, կը կարծեն թէ ատոնք իրականութիւններ են եւ կը փարատեն ձանձիրը մարդուն, կ'երջանկացնեն զինքը այն բոլոր երազները որոնց պատրանքով պիտի սոսկայ քիչ ետքը: Սխալներու շարունակութեան, ժանգերու տակ մաշող նկարագիրներու փտումներուն սոսկումն է այդ որ մեղաւոր կ'ընէ իր ենթական, մեղաւոր նախ իր իսկ անձին, խղճին հանդէպ, եւ ետքը Աստուծոյ հանդէպ: Գիտակցաբար որոշուած եւ վճռուած դարձ մը այդ սոսկալի վիճակէն դէպի հայրենի գիրկը, պիտի ապահովէ մարդուն երջանկութիւնը՝ բոլորովին սրբուած եւ մաքրուած իր աղտոտութիւններէն: Անառակի ՄԵՂԱՅԻՆ, գիտակցական զղումի զօրաւոր մէկ արձագանգն էր. այդպիսի ՄԵՂԱՅԻՆ մը փրկելութիւն է ամէն սխալողի, ամէն մեղաւորի համար:

Ճանչցէ՛ք ձեր սխալները որ մեծնա՛ք, զղացէ՛ք որ փայլեցնէ՛ք ձեր տոկուն նկարագիրը. զօրացուցէ՛ք ձեր ներսը երջանիկ կեանքի մը ազդակը, եւ այսպիսի փառաւոր վիճակի մը մէջ փառաւորեցէ՛ք զՍմանաւոր երրորդութիւն, զՀայր եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին. ամէն:

ԲԱՐԳԵՆ ԵՄԻՍԿՈՊՈՍ

ՎԵՏԻՆ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

«Սուքա եւն որ գտնի վշտաց մեծաց եւ
լուացին զարկանելիս իւրեանց եւ սպի-
տակացուն տրեամբ գտնին»

(Յայտն. Է, 14)

Ու հիմա՝ առնս պահուս, ան աչքիս
առջեւ կուգայ կը պատկերանայ իր սովորն
ու զալուել դէմքովը: Հայեցի աչեր՝ լայն
ու սեւ թարթիչներով եզերուն, ուր ար-
ցունքներ կ'աղբերանային կայլակ կայլակ
կաթկլիկով աշտերն ի վար իր ձեռքին
մէջ բռնած տղօթագրքի թերթերուն վրայ,
որոնց՝ ո՞վ գիտէ՝ իր սիրտ գրքի թերթերէն
որքան թաքուն յոյզեր կը հաղորդուէին
լինս ու անբարբառ:

Ան՝ հիմայ այլեւս չի վերադարձիր մեր
լոյս աշխարհին, շատոնց մեռած զայած է
նետաճար աղաւնիի մը պէս կեանքի հորի-
զինէն դէպի յաւիտենական հորիզոնը ան-
թափանց, զոր մեր աչքերէն կը ծածկէ
մահուան սեւ վարագոյրը հոգեաւարտու:

Թէեւ ընտանեկան ու ընկերական վշտե-
րով խոցոտուած սիրտ մը ունէր, թէեւ իր
կեանքին մէջ ա՛լ աւելի լացեր էր քան
ժպտեր, տառապեր էր քան խնդացեր,
հակառակ աս ամենուն, սակայն,
զուարթ էր ան ու անխուով, ու միշտ եր-
ջանիկի մը երեւոյթը ցոյց կուտար, միշտ
խաղաղ ու ժպտուն, նման այն գետերուն
որոնք թէեւ արատաքուտ հանդարտ ու
խաղաղ, բայց բոլոր իրենց յորձանքն ու
խռովքը կը պահեն իտրքը իրենց ալքերուն:
Ճիշտ այսպէս ալ, անոր սրտին ու հոգիին
փոթորկումները, մտալիկումները՝ իր ներ-
սը, իր կեանքի ներքին կողմը տեղի կ'ու-
նենային: Վիշտը՝ սակայն՝ զեղեցկացուցած
էր զինքը. հակառակ իր արամանոյշ նա-
յածածքին՝ յաւիտենական ժպտի մը ցոլա-
ցումը կ'երեւնար իր դէմքին ու աչքերուն
մէջ, եւ ուր կը կարգապահէր որոշակի իր
տառապող հոգիին բոլոր պատմութիւնը:

Ճանաչէր եւ մէկը, որ իր վշտերուն մէջ
յիշէ ու մոխրաբէ վշտացեալները, իր լաց-
քին մէջ չմոռնայ լացողները. անոս աս էր
իր հոգիին գեղեցկութիւնը: Զինքը մօտէն

ճանաչողները՝ լաւ գիտէին որ իր վշտերուն
արցունքները գթութեան եւ առաքինու-
թեան անուշաբոյր ծաղիկներ փթթեցուցեր
էին իր խոցոտուած սրտին մէջ՝ տաք շնչով
Հաւատքին որ մեր տառապող հոյ ցիւղին
հոյ մայրերուն է մասնալատուել:

Սոսկալի անձրեւոտ օր մըն էր, երբ
զինքը ցուրտ հողին յանձնեցինք Պոլսոյ
արուարձաններէն մէկուն գերեզմանոցը:
Քանի մը ծաղկեպսակներ զրկուած էին գա-
նաղան Սլքատախնամներու կողմանէ, ու
րոնք սակայն արհեստական ծաղիկներ էին,
եւ որոնք սովորաբար աս ու ան մեռելնե-
րուն դադաղները կը զարգարեն նուէրի
մը անկեպալութեամբ. անբոյր ու անկեն-
դան ծաղիկներ, որոնք միշտ պիտի զար-
գարեն առաքինութեան բոյրն ու ոգին
չունեցող կենդանի մեռելներու դադաղ-
ները:

Այն օրը, սակայն, բնական ու գեղեցիկ
ծաղիկներէ հիւսուած խաչ պսակ մըն ալ
կ'երեւնար անոր սեւ դադաղին վրայ,
պսակ մը, որուն հիւսկէները իր պէս պէս
ծաղիկներով մէկտեղ, շատ չուտ թօթա-
փեցան վար ինկան նոյն օրունան լալկան
ամպերու արցունքներուն սակ. բայց ան-
գին՝ զինքը լացող աչքերուն արցունքնե-
րը կային անոյշ ու մշտաճա, որոնք յաւիտ-
անթաւամ պիտի պահէին իր ինկելի յի-
շատակին, իր գթոտ սրտին առաքինու-
թեան ծաղիկները անմահաբոյր. զի այդ ա-
ռաքինալարդ մայր—տիկներ՝ իր թաղին
մէջ ու իր թաղէն հեռու մայրն էր եղած,
մարմնատեսիլ հրեշտակը բաղդին անժա-
ռանգներուն եւ կարօտներուն:

Ես վշտին գեղեցկութիւնը ճանաչեր ու
տեսեր էի այդ բարի ու արի կնոջ սրտի
գործերուն մէջ. ու իր մահուան օրն իսկ
իր գերեզմանին շուրջը՝ ուր այլ եւս կը
բաժնուէր մեր աշխարհէն, իր ցուր ու
վշտի կեանքէն, ան գեւ կ'ապրէր տարող-
ներու սրտին մէջ, կը ժպտէր իր արտ-
մաթախիժ հոգին լացողներու հանդէպ:

—Վիեսն ալ գեղեցիկ կրնա՞յ ըլլալ, պիտի
լսես. կը հասկնամ գեղեցիկ աչքեր, գե-
ղեցիկ գործեր կամ երջանիկ կեանքերու
գեղեցկութիւնը. բայց գեղեցիկ վիւս, օ՛հ

ասի որքան տարօրինակ, որքան հակա-
պատկեր բացատրութիւն մըն է :

Վիշաք՝ արդարեւ՝ իր արտաքին երեւոյթին տակ շատ տղեղ է, ան գիտա-
խաբ ուրուականի մը պէս կը ցցուի մեր աչքին ու կեանքին առջեւ, ան մեր չըս-
պատած ու չուզած մէկ վայրկեանին ներս կը մտնէ մեր սրտերէն ու տուներէն, ուր յանկարծ կը փոխէ մեր ժպիտները արցունքի, մեր ծիծաղները հեծեծանքի, վիշտն ալ հզօր է մահուան պէս, բուռն է լափլի-
զող բոցի մը պէս, ջախջախիչ է երկնքի շանթին պէս :

Անի ցցուած կեցած է մեր կեանքի անց-
քին վրայ. մենք անխուսափելիօրէն պիտի հանդպինք իրեն կամ ինքը մեզի : Մտի՛ր ամէնէն երջանիկ կարծուած տուներէն ներս. հոն ալ պիտի գտնես ու տնտես անոր աւերիչ քայլերուն հետքը. ու չկայ մարդկային սիրտ մը որ խոցոտուած արիւն-
նոտած չըլլայ անոր թունաւոր սլաք-
երէն :

Բայց վիշաք՝ ամէն հոգիներու համար մահացեալ կամ փճացեալ հարուածը չէ եւ չկրնար ըլլալ :

Օր մը բարեկամիս մէկուն հիւրասրահին մէջ, պատին վար կախուած վերտա-
ռութիւն մը հանդիպեցաւ աչքիս, ուր ոտ խօսքերը գրուած էին. — ՎԻՇՏԻՔ՝ ՍՐՏԻՆ ՓՈՒՇԵՆ է, աս գրուածքին վրայ եղած վիճաբանութիւնը դեռ չիմ մոռնար : Ես աս խօսքերը բարեջրջելով կը պնդէի թէ՛ սխալ է այս գրուածքը, թէ պէտք է գրուի. — ՎԻՇՏԻՔ՝ ՍՐՏԻՆ ԾԱՂԻԿՆ է : Ընդ-
դիմախօս բարեկամս վերջապէս համոզ-
ուեցաւ որ մարդիկ կրնան վշտի փուշը ծաղիկի փոխել յարատեւ աշխատութեան ու համբերանքի շնորհիւ, թէ վիշաք պէտք է ըլլայ մեր նկարագրին, մեր կիրքերուն, մեր զղացումներուն համար բոց մը, բով մը, մտքերու, փայլեցնելու ու գեղեցկացնելու համար մեր հոգին, ինչպէս ոսկին կամ մետաղը ոսկերչին քուրացին կամ հալոցին մէջ : Վեհ ու ազնիւ հոգիներն են որ թէեւ տառապանքի ու վշտի բոցին մէջ կ'ընթան, կ'այրին, կը դալատուին՝ բայց չեն մոխրա-
նոր, չեն փճանար, ընդհակառակն՝ ալ

աւելի գեղեցիկ, ալ աւելի հրապուրիչ ու պոյծաւ երեւան կուգան կեանքի թառե-
րաբեմին վրայ : Անոնք որ իրենց վերաւոր հոգին լուացին վշտի կրակէ աւազանին մէջ, մաքրուեցան արցունքի դեմքուն մէջ իբր ձիւնասպիտակ աղանձներ, ու նոնց համար է որ Պատմաւ կղզիին աքսո-
րակներ կ'ըսէ իր Յայանութեան գրքին մէջ. «Սաքա են որ գան ի վշտաց մեծաց եւ լուացին զարկանելիս իւրեանց եւ սպիտա-
կացուցին . . . »

Վիշաք չկրնար սրտին փուշն ըլլալ, որքան որ ան իր առաջին թափին մէջ այնպէս երեւի կամ կարծուի :

Որո՞նց պատմութիւնն է որ մարդկու-
թեան արտի սրբազան տաճարին մէջ տեղ մը ունի. չէ՞ մի որ անոնց միայն, որոնք վշտի շապիկն են հագեր՝ մահուան պա-
տանքէն տառջ, եւ ապա պատմութեան ան-
մահութեան : Սիրելի ու պաշտելի չէ՞ եւ զած սիրտիդ համար՝ յիշատակն ու անունը անոնց որոնց աչքին մէջ արցունք կար իր ու լացողներու համար, սրտին մէջ գութ ու կարեկցութիւն՝ վշտացեալներու հանդէպ, եւ որոնք տառապեալներու կարուստին կը պատկանին այս տրամութեան հովտին մէջ : Ի՞նչ բան է որ քսան երկուր դարե-
րէ ի վեր միլիոնաւոր հոգիներու երկրպա-
գութեան եւ պաշտելիութեան առարկայ է դարձուցեր ՆԱԶՈՎՐԵՑԻՆ, եթէ ոչ անոր Դեթանմանի պարտէզին վիշաք, մարդկու-
թեան սիրտն համար կրած հոգեկան տրա-
մութիւնը, ու Գողգոթայի իր խաչաչա-
չար կեանքը : Վիշտն էր որ գեղեցկացուց զինքը, խաչի ու անձնազոհութեան կեանքն էր որ աստուածացուց զինքը :

Վշտին մէջ՝ ալ աւելի մեծ է մարդ քան հաճոյքի կամ ուրախութեան. տառապան-
քի ու կակիծներու կեանքէն է որ կը ծնի ամէնէն վեհ, ամէնէն բարձր կեանքը : Անձնասպանները՝ եւս պարզապէս կեանքի կոխիւն դասալիքները կը նկատեմ, հոգիի մեծութեան դէմ մեղանշողներ :

Եկեղեցին անոնց թաղումը չա՛րաօններ, չա՛ղօթեր անոնց համար. բայց եւս այս ու սխալ կը գտնեմ, ու հակառակ քրիստոնէ-
ական լա՛յն ներողամտութեան. եթէ մեռ-

նույի մը համար աղօթել պէտք է, անձնասպան մեղաւորի մը համար ո՛ր աւելի պէտք է աղօթէ եկեղեցին: Մեղազրանքս անձնասպանութեան սկզբունքին դէմ է, զի անիկա տկար հոգիներու, մոլեղնեալ մտքերու գործն է, ոճիրն է. ինչո՞ւ չաղօթել այդ ինկամ հոգիներու համար եթէ հարկ է աղօթել մեռելներուն համար:


Մարդ պէտք է արիւմտար կուրծք տայ սառապանքներու ու վիշտերու հարուածներուն, ինքը պէտք է յաղթէ անոնց քան յաղթուի անոնցմէ: Բոլոր մեծ ու կորովի հոգիները՝ անցեր են վշտի վշտա ճամբաներէն, վիշտն է որ ի վեր կը հանէ մեր արժէքը, անով կը յայտնուի մեր նկարագրին աղնու թիւնը, մեր հաւատարմին մեծութիւնն ու ուժը. անով է որ կը չափուին մեր բոլոր բարոյական արժանիքները:

Կը պատմուի թէ՛ ծաղիկներ կան ձիւնաթոյր հսկայ լեռներու կողքին վրայ, որոնք փոթորիկներու եւ մրրիկներու պահուն է որ կը բացուին ու կը բուրսն զգլխի՛ն անուշահոտութեամբ մը. այսպէս հոգիներ ու կեանքեր ալ կան՝ խաչադարձար Գողգոթայի բարձունքն ելած, որոնք տառապանքներու եւ վշտերու պահուն է որ կը բանան ու ցոյց կուտան սրտի եւ հոգիի ամէնէն չքնաղ, ամէնէն գեղեցիկ զգացումներու ծաղիկները, որոնք յետոյ կը կազմեն, կը փնջեն փառապատկը մեր կեանքին:

Դու մի՛ սոսկար, մի՛ զարհուրիր վիշտէն, մի՛ մերժիր դաշն, մի՛ գտնադատիր անիկէ. ան պիտի վարձէ քեզի, պիտի արիւմտէ քեզի, պիտի զեղեցկացնէ հոգիդ, ան պիտի յայտնէ ներքին բարոյական մարդուդ իսկութիւնն ու արժանիքը:

ՍՍԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ.

Ատանա



ՔԱԶԱՆԵՐԻՉ ՏԵՍԱՐԱՆ

Ամեն ինչ լոյս է, ամեն ինչ հրեռանգ: Մամուկը ոտով իր արագ ու ժիր, Կը կապէ կակաչներուն վարդերանգ Կլոր, արծաթեայ հիւսկեցներ իր:

Սա՛ շերեփագին, յարաւարժ աղուր, Կը տեսնէ աչքով աստղերն երկնին, Շեղ լնակին մեջ, ուր փառաւոր, Ամբողջ աշխարհ մը կայ բախուն, խորին:

Կարծես քե վարդը վերառոյց կեանքով, Կը զուգաւորէ կոկոնի կարմրակող, Թռչունը կ'երգէ ներդաշնակ ձայնով, Խիս նիւղերուն մեջ, արեւառոյդ:

Իր ձայնը կ'օրհնէ Տերն հոգւոյ համայն— Մի՛տ տեսնելի օրհնց անապակ— Որ արեւոյսը—բոց, հուր բարբեւան, Կ'ընէ երկնին բիբ մը կապուտակ:

Անհաւներուն մեջ, ուր չրկայ ձայն բնաւ, Նղնարդը երկչոտ, կ'երագէ, խաղայ, Կանաչ բուփերուն մամուռին մեջ բաւ, Ոսկեբգէզը լոյս կուտայ, անմահ:

Արեւը օրուան գապչ է եւ աղօս, Ջերդ ապափինոյ մի ուրախութիւն, Ան կը բանայ իր աչքը ճանաչոտ, Ուրկէ երկնին կ'իջնայ հաղցուրթիւն:

Շահալակը մեղուին հետք կը խաղայ, Հնօրեայ որմը միտ համբուրելով, Ջերմիկ ախօսը զուարթ կ'արքնայ, Իր ներքեւ բաղուած սերուն հարժելով:

Ամեն ինչ կ'ապրի, կ'երեւի խիստ լաւ, Բաց դուռին վրայ՝ ճանաչօք փայլուն, Հոսող ջուրին վրայ՝ սուտեր սրաւաւ, Կանաչ բլրին վրայ՝ երկինք լուրջ գոյն:

Դաւար կը փայլի, եղանիկ եւ ջինջ, Ծառը կը ծաղկի, վարդը կը բացուի... Ո՛վ մարդ մ'երկնչիր, բնութիւնը միջ, Գիտէ մեծ գաղտնիքն, եւ կը ծիծաղի....

(Թարգ. Գաղղ.է)

ՍՈՒՐԷՆ Տ. ՎԱՐԴ. ԳԱԼԷՄԵԱՆ

Յիկուտար

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ

ՀՈԳԵԿԱՆ ՎՐԴՈՎՈՒՄՆԵՐԸ

ՆԱԽԲԱՆԵՐ ԱՌ ՀՐԱՅՐ

Ա.

Սիրելիդ իմ Հրայր.

Հոգեկան վրդովումներ ունիմ, կը գրես ինձ:

Ժամանակին սկեպտիկ ոգին, եւ ամէն կողմէ կրօնքի եւ անոր հաւատալիքներուն դէմ ցուցում տրամաբանաւ վերադարձումը բուն տալիս մը մասնէն եւն զքեզ: Բարեպաշտ ծնողի մը զաւակ, պզտիկ հաւատիք վտարում տաք զգացումով մը փորելու քու գործուոր Նկեղեցիդ, երբ կը լսես ու կը կարգաս աջէն ձախէն յարձակումներ քու սրտիդ ամէնէն մօտիկ զաւակներուն, կը տեսնես ճիգ մը՝ հիմէն քանդելու ինչ որ կայ նուիրական բալոր ազգերու, եւ մասնաւորապէս քու պատկանած տառապեալ ազգիդ՝ Հայ ցեղին կեանքին մէջ, ճշմարիտ յաւումի մը կը մատնուիս, կը զգաս քու անձիդ մէջ ծայր ապր բուն պայքարի մը, որ կը վախնաս թէ հետզհետէ աւելի պիտի սաստկանայ, եւ պիտի ընկճուի քու վստահութիւնդ՝ ցարդ գոյացուցած համոզումներուդ ուժին վրայ, պիտի խորտակուի քու Հաւատալիք՝ գերազանց Ուժի մը, տիեզերքի Արարչի մը գոյութեան վրայ, պիտի սնուանայ քու սէրդ՝ անձնութեան ինքն կրօնքին, եւ անոր աստուածային Հիմնադրին վրայ:

Պէտք է խոստովանիմ, պիտի'ս, թէ նամակդ՝ հետո՛ւ զիս մասնա՛կից ընկէ քու հոգեկան վրդովումներուդ, միտքուրութիւն մը եղաւ ինձի: Ահա՛ թէ ինչո՛ւ:

Կրօնական անտարբերութեան, լաւ եւս կրօնի դէմ տարածել ջանացում տրամաբանաւ մը ոչ չըջանին մէջ, երբ սովորութիւն է ամէն բանով հետաքրքրուիլ, բայց երբեք կրօնքով, երբ աշխարհի ամէնէն հեռաւոր անկիւնին մէջ տեղի ունեցած երկրորդական դէպք մը կը շահագրգռէ

զմեզ, բայց երբեք միտքէ չենք անցնիր խորհիլ մեր հոգիին եւ իր պէտքերուն վրայ, չենք մտաբերեր պահ մը անգրագիտաւ այն յաւանական հարցերուն որ գործու ընթացքին զբաղեցուցեր են ամէնէն հզօր միտքերը, եւ զանոնք հարկաւոր են խոնարհելու անձանօթ, գերբնական Զօրութեան մը առջեւ, դուն, պիտի բարեկամս, բաղմուղբալ կեանքիդ մէջ, երիտասարդական եւանդդ կը նուիրես քրքրելու՝ գործնական, աւօրեայ — բայց վաղանցիկ կեանքի բոլոր պէտքերէն ու պահանջներէն տարբեր, եւ անոնցմէ շատ բարձր տեսական ընդթ ունեցող հարցեր, որոնք նիւթէն վեր են, որոնք հոգիի կեանքը կը շօշափեն, յաւանականութիւնը կ'ընդգրկեն: Հոգ չէ թէ այդ հարցերը, իրենց շուրջը յարուցուած աղմուկներով, պայքար մը կը ծնուցանեն քու մէջ: Պայքարը առողջութեան նշան է, պայքարը կեանքն իսկ է: Ատիկա կը ցուցնէ թէ դուն կ'ապրիս գաղափարական կեանքով մը, որ քան քան բարձր է սովորական մարդոց սովորականութեն, որքան հոգին բարձր է նիւթէն:

Բայց, պայքարը, որպէս զի կաղզուորիչ դեր մը ունենայ մեր վրայ, պէտք է մընք զայն զխտակցօրէն, լաւ պատրաստուելով կառարտելիք կռիւին, ձեռք անցնելով անհրաժեշտ, նորագոյն զէնքերը, հաւատարմ, եւ եթէ կարելի է աւելի՛ գերազանց զէնքեր ձորելով, քան ինչ որ կը կարծենք թէ ունի հակառակորդը:

Կարելիութեան սահմանին մէջ պիտի ջանամ օգնել քեզի՝ մընք պայքարիդ մէջ, այն համոզումով որ ուժերու միացումը պիտի կրնայ ուժերու բաղմուղբալ կում առաջ բերել:

* * Անշուշտ հնար չէ քու յաւանքս լոր հարցերուդ վրայ խորհրդակցիլ միակ նամակի մը սեղմ շրջանակին մէջ: Անոնք ընդարձակ հատոյններու նիւթ կրնան հայթայթել: Պիտի ջանամ համառօտաբան ըլլալ մէկ քանի նամակներու մէջ զորս մտադիր եմ քեզի ուղղել, յաւանքով որ իմ խօսքերս ու թիւղբութիւններս աւելի ըլլան քեզի միւրճուելու այդ հարցերու

վրայ խօսող նշանաւոր հեղինակներու գործերուն մէջ, գտնելու համար անոնց մէջ ինչ որ իմ համեմատ եւ սահմանափակ կարողութիւնս ձեռնառն չէ ներկայացնելու ու պարզելու քեզի՝ նոյնքան հմտութեամբ եւ ուժգնութեամբ:

Միքճուհիէ տաաջ տիկերքի տեսչութեան, Արարչի մը գոյութեան, Ս. Գրոց նախնականութեան եւ այլ շատ կարեւոր հարցերու մէջ, այսօր կ'ուզեմ խօսիլ քեզի բազմաառարար երկրորդական խնդրոց մը՝ Պահիկն վրայ, որ սակայն ունի իր կարեւորութիւնը, իբրեւ մէկը այն ազգայիններէն որ նպատակ ունին բարոյական մարդը կազմելու, նկարագիրներ կերտելու:

Այդ հարցը-որ արդէն առիթ եղած է քու վրդովմաներդ ինձ հաղորդելու—չօշափելու ամէնէն յարմար ժամանակը հիմա է, Բանի որ Մեծ Պահքի մէջ կը գտնուինք, եւ նոյն իսկ հայ հաստատեցեալներէ աղտահով եմ թէ հիմակ առաւել քան երբեք կը լսես այնպիսի խօսքեր, որ Պահքին կարեւորութեամբ վրայ ունեցած համոզումը զօրացնելու բնոյթը չունին:

Պէտք է դիտաւ, սակայն, սիրելի՛ բարեկամ, թէ Պահքը նշատակ մը չէ Հայ-Քրիստոնեային համար, Պահքը միջոց մըն է Զղջումի կեանքին մէջ գիտակցօրէն յառաջանալու: Զղջումի կեանքին կարեւորութիւնը՝ երջանիկ ըլլալու համար՝ աւելորդ կը նկատեմ բացատրել քեզի, Տ. Բաբգէն Եպիսկոպոսի այնքան զեղեցիկ ու ներշնչող խորհրդածութիւններէն ետքը, զորս առիթ ունիս կարգաւ Տաճարի ներկայ թիւին մէջ իսկ: Ի նկատ ունենալով մարդկային բնութեան ակարութիւնը, Եկեղեցւոյ հիմնադիրները հոգեւորական շատ խորունկ ծանօթութիւնով մը իրաւամբ դրած են զղջումը կամ ապաշխարութիւնը Եկեղեցւոյ եօթը Խորհուրդներուն կարգը: Կիրքերու կամ մեղ չբնորոշող միջավայրի մոլեկան ազդեցութեանց ենթակայ, մարդ իր նիւթական թէ բարոյական, անհատական թէ բնկերային կեանքին մէջ միշտ արամադիր է սխալելու, ու միշտ պէտք ունի անդրադառնալու իր սխալին վրայ: Եւ իհարկէ պարտաւոր է ընել ամէն օր,

բայց զոնէ աւարւոյն որոշեալ ժամանակներուն մէջ պէտք է որ ընէ անհրաժեշտարար: Եւ զղջումի կեանքին մէջ, աղօթքէն՝ այն է Աստուծոյ հետ հաղորդակցութեան միտնելու գերազանցօրէն անուշ եւ հոգեպարար վայրկեաններէն ետքը, ինչ կայ կարեւորագոյն մարդու իր կամքին վրայ ազդելու, իր կամքը կրքելու համար, եթէ՛ ոչ Պահքը, այսինքն հրաժարումը այնպիսի վայելքներէ, աշխարհային հրապոյրներէ, որոնք ոչինչ ունին իրենց մէջ հոգին բարձրացնող, որոնք ընդհակառակն իրենց չափազանցութիւններով կրնան մարդս իջեցնել իր աստուածամորձ բարձրութենէն շատ վարերը: Պահքը, ինչպէս որ կ'ըմբռնուի հատարակ ժողովրդեան մէջ, այսինքն ուսուցիչներու որոշ գաղափարէ մը հրաժարումը կամ չափաւոր գործածութիւնը, նիւթականացած մէկ ձեւն է աւելի՛ բարձր գաղափարականի մը: Հայ. Առաքելական Ս. Եկեղեցին, համաձայն Ս. Գրոց պատուէրներուն, միայն ուսուցիչէն զգուշանալը չէ՛ որ պահք կը նկատէ: «Զի ոչ է արքայութիւնն Աստուծոյ կերակուր եւ ըմպելի այլ արդարութիւն եւ խաղաղութիւն եւ խնդութիւն ի Հոգին Ասորք»: (Հռովմ. ԺԴ. 17): Եթէ պահք է, մարդու իր կամքին վրայ իշխողութիւն մըն է համադրանքէ զգուշանալը, որով մարմինը կը պահպանուի չոր հակամիտութիւններու դէմ, նոյնքան եւ աւելի՛ տառուաճանց պահք մըն է բերանը պահպանելը անվայելուչ խօսքերէ, միտքը զգուշացնելը անյարմար, աղեղ մտածողութիւններէ, ակամջը՝ չարին խողովներէն, սոքը՝ չար ընթացքներէ: Ուսել խմբներէ զգուշանալը Պահքին մէկ կողմն է միայն, իսկ Պահքի ամբողջութիւնը բոլոր զգայարաններուն պահպանութիւնն է. իսկ մէկուն պահպանութիւնը չի կրնար քաղձայնած նպատակին հասցնել: Այսպէ՛ս կը պատուիրեն մեզի Ս. Գիրք, որոնց վրայ հիմնուելով, մեր երանաշնորհ Հայրապետները կը ծանրանան Պահքի դադափարական ընդլայնումին վրայ: Տեսէք ինչ կը զրէ մեր երանելի, ազգասէր Հայրապետը՝ Ս. Յովհանն Մանգուկունի՝ լոկ նիւթականացած,

կերակուրի պահեցողութեան տկնարկելով . — «Այդպիսի Պահք մը չի սրբեր եւ արդարացիներ, այլ կը պղծէ եւ կորուստի կը մատնէ . եթէ կերակուրով պարկեշտանայ մարդ բոլոր միւս անդամներով չպահէ, պարտաւ տեղը ջանք կ'ընէ, այդպիսի պահողը կեղծաւորութիւն կ'ընէ, ուստի պատիժի արժանի է, որովհետեւ ամենազէտ Աստուածն անգէտ համարեցաւ, կրօնքի չարաչար կեղծաւորութիւնով» :

Եւ տակաւին, պահեցողութեան այդ ընդլայնուած գաղափարականը բացատարականութիւն մը իր նկատէ Եկեղեցին, որով կ'աշխատինք մեր մէջ չորցնել ամբարշտականութիւնը, նախանձը, բարկութիւնը, որկրամոլութիւնը եւ միւս մահացու մեղքերը : Զատնէք կարելի չէ բժշկել կամ ամօքել բացատարական ազդեցութիւնով : Անհրաժեշտ է նաեւ դրական ներգործութիւն, իւրաքանչիւր մեղքի դիմաց դնելով եօթը առաքինութեանց գործում, որոնցմով պէտք է պարարտանայ մեղքերու ցանկութենէն երաշտացած հոգին : Այդ առաքինութիւններն են հաւատք, յոյս, սէր, արիւնթիւն, խոհմութիւն, արդարութիւն, ողջախոհութիւն : Հիտեապէս, նիւթականացած Պահքին, կերակուրներէ զգուշաւորութեան մէջ մինք պէտք է տեսնենք սկզբնաւորութիւն մը, վարժութիւն մը տւելի բարձր առաքինութեանց հետադիմելու, բացատարական խնդրանքին պահելով ամէն տեսակ շարժումէն, եւ դրականապէս մտնելով բարի գործունէութեան մէջ, հանդէպ թէ՛ մեր անձին եւ թէ՛ մեր ընկերին :

Ու որպէս զի Պահքը ամէն կերպով արդիւնաւոր ըլլայ, պէտք է սրտէ գոյ, եւ ամէն մարդու համար՝ իր կտրուութեան չափով :

Այսպէ՛ս ըմբռնած են Պահքը Հայ Եկեղեցւոյ Հայրապետներ, եւ Եկեղեցիին ուղիին թափանցող հին ու նոր միաքեր : Ասանք Պահքին հետ զուգընթաց, իբրեւ անհրաժեշտ առաքինութիւն մը, մեր վրայ պարտք կը դնեն ողորմութիւնը, աղքատը կշտացնելը, այս բացատարութիւնն ալ առնելով իր լայնազոյն իմաստով, այսինքն

օգնելը կարօտ ընկերին, հոնրային Հաստատութեանց կամ Եկեղեցւոյ բարեգարգութեան : Իսկ երբ մարդ չբաւոր է եւ չի կրնար կատարել նիւթապէս օգնելու իր պարտաւորութիւնը, գոնէ կրնայ իր աչքին լոյսով կոյրին առաջնորդել, ոտքին ուժով կաշկն ցուպ ըլլալ, ձեռքով՝ անդամաւոր՝ ձին առաջնորդել եւ գտացեալին օգնել, լիզուով՝ մաշկաւոր ուղղութեան բերել, վշտագնեալը մխիթարել, լսելիքով՝ վաղ-վաղակի լսել ելլօրը հրամանին եւ խոնարհութեամբ հնազանդիլ սնոր կամքին : «Արդ, զայս ամենայն ողորմութիւն՝ առանց տակւոյ՝ ամենեցուն մարթ է բաշխել եւ վարձն առաւել ընդունիլ քան յենչիցն ողորմութենէ» : (Մանդակունի) :

Կը տեսնէք, սիրելի՛ բարեկամս, թէ ո՛րչափ բարձր գաղափարականով մը հաստատուած է Պահքը, եւ պահեցողութեան սկզբունքը ո՛րքան զեղեցիկ արդիւնքներու կ'առաջնորդէ ճշմարիտ հաւատացեալը : Եւ որպէս զի Հայ Քրիստոնէականները չափմանաւորապէս բուն բարեկենդանի օրուան ճաշու Գիրքը՝ Եսայիի ԾԼ . գլուխը, եւ Պողոտի առ Հաովմայեցիս թղթոյն ԺԴ . գլուխը ամբողջովին : Այդ հաստատմաներուն մէջ կը խոսանայ Եկեղեցիին ընդունած փիլիսոփայութիւնը՝ պահեցողութեան վրայ . — «Ինչո՞ւ, կ'ըսէ Իորայէի ժողովուրդը» . պահեցողութիւն ըրինք մենք ու դուն չտեսար, մեր անձերը խոնարհեցուցինք ու դուն չգիտցար : — Որովհետեւ ձեր պահեցողութեան օրերուն մէջ ձեր բաղձանքները կը կատարէք, եւ ձեր ձեռքին տակ գտնուողները կը կսկծեցունէք . . . Ես այնպիսի Պահք չեմ ուզեր, կ'ըսէ Տէրը . քակէ, ա-

ներառութեան կոնֆլիկտները... , ներդրողները աղաա խո'ղ, և պատուէ' անխրաւութեան բոլոր մարտնչները. անօթիներուն մանրէ' քու հացդ, և անտուն. անտէր աղքատները քու տունդ. ապա, և երբ մերկ մը սեմնեա, հաղուեցուր: — Այն տան քու լցադ պիտի ծաւալի, և բժշկութիւնդ չուտով պիտի համի... Պիտի աղաղակես, և Աստուած պիտի լսէ քեզի»: Այսպէ'ս կը գրուած Մարգարէն Իսրայէլի ժողովուրդին: Իսկ Պօղոս Առաքեալ պահնորդութեան վրայ գրած հաստատման մէջ, (Հռովմ. ԺԴ.) Բրիտանիական պարտականութեանց ճշմարիտ ուղի մը կը դնէ. յանձնարարելով հանդերձ միա չուտել կամ գինի չխմել եղբայրդ չգայթակղեցնելու համար, կը պատուիրէ նաեւ քրիստոնէական ներողամտութիւն ուսողին չուտողին հանդէպ, և փոխադարձութիւն:

Դրութեան սեղմ տաճանը չի թողաւորեր աւելի ծանրանալ այս նիւթին վրայ: Կը կարծեմ թէ կարողացայ քիչ շատ բացատրել քեզի Պաճքի փրկափայտութիւնը, և դուն համամիտ կը գտնուիս ինծի, թէ իրերու մակերեւութային քննութեան մը, կամ գուցէ քննութեան բացարձակ բացակայութեան մը արդիւնք է սկեպտիկներէ ոմանց արհամարհանքը՝ պահնորդութեան սկզբունքին դէմ:

Պաճքը՝ վերջապէս՝ ունի գերազանցորէն բարոյացուցիչ նշանակութիւն, իրիւ մէկը կամքի դաստիարակութեան միջոցներէն, անկախաբար այն բոլոր լուրջ տեսակէտներէն, որոնք Եկեղեցւոյ Հայրերունը, Ս. Գրքինն են մանաւանդ, և որոնցմէ անջատու մը, և Պաճքին պարզ ունակութեան մը վերածուի շատ բան պիտի կորնցնել ապա տնոր բարձր գաղափարականէն:

Սիրողի ողջունիւ

ՋԱՐԲԱՍՏՐ ԴԱՆԱՆԱՅ



Բ Ժ Ժ Ո Տ Ա Չ Ք Ե Ր

Ձի մի մթաւքն՝ որ դբօքն շողայցեն՝
արգել հայելոյ լուսոյն լիցին:

ԵԶՆԻԿ

Աչքես բծոս, ցաւագա՛ր,
Ով Արեգակ, լոյս արդար,
Ձեմ կրնար, ո՛հ, անարգել
Վեր, դեպի քեզ վերցրնել:

Ճառագայթներդ գերք ասեղ
Կը ծակեն զայն, երբ մեկ հեղ
Քեզի նայիմ կարօսով
Տեսնելու դիմնդ հոգեբով:

Ու կսկիծով կը յառիմ
Դեպի գետին մութ, նրսեմ,
Աչքես, ո՛հ, կը խաւարին...
Որսը կ'ըլլան խաւարին:

Կասկածի ախտն աչքերուս,
Մաքրե՛ իսպառ, Տեր Յիսուս,
Որ անարգել, անխափան,
Յառիմ դեմքիդ աննրման:

ԼՈՒՍՆԹԱԳ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՐՏՈՒԹՅԱՆ ԿՈՒԹԻՒՆ ԵՄ
առջ եկած է Հայ ժողովուրդին մէջ Բազմէի Թէմրոն գիւղախումբին մէջ պատահած վայրագ ոճրին վրայ զոր անցեալ թուով ծանուցինք, և որուն զոհ գացած են 5 պատուական Հայեր, և երկու Հայեր ալ իրենց աղգակիցներուն խողտողուելուն աւանդաւորութեամբ իսկապարհ են: Հայ երեսփոխաններուն և Աղգ. Պատրիարքարանին հաղորդուած այս վայրագ ոճիրէն դեռ լուր չունի եզեր կառավարութիւնը: Վանայ երեսփոխան Վահան Էֆ. Փափագեան, նաեւ Գրիգոր Զօհրապ Էֆ. դիմում րբին Ներքին գործոց նախարարին, և Պատրիարքարան հասած հեռագիրն ալ հաղորդուեցաւ: Նախարարին պատասխանն եղած է՝ ըստ սովորութեան՝ թէ խիստ հրամաններ արուած են հեռագրով, այս կարգի դէպքերն արգիլելու համար: Բայց

օրաթերթերը իրաւամբ կը պահանջեն ոչ միայն ոճրագործներու խափա պատժուիլը, այլ եւ կը պնդեն որ պէտք է պատասխանատու ճանչցուին տեղւոյն քաղաքային եւ զինուորական պաշտօնեաները: Այս կերպով միայն կարելի է թերեւս տառջնաւոր մերթ ընդ մերթ լուծած այս կարգի վայրագութեանց: Թուղթի վրայ սղլուած հրամանները անպօր կը մնան վճռական ազդեցութիւն մը ունենալու, ինչպէս տեսնուեցաւ յարդը:

Պիլէճիկէն Տ. Ստեփաննոս Արքեպ. կը հաւագրէ թէ յաջողած է եկեղեցին բանալ: Եւ օր նախակով հաղորդուեցաւ Ն.Արքեպ. նախկին թէ Վարչութեան կողմէ իրեն օժանդակ կը զրկուի Սմայտ Բիւրատ էֆ.: Ուրիշ նամակով մը Տ. Թաթուլ Վ. ի յանձնարարուեցաւ որ իր անձին շուրջը դարձած խնդիրներուն պատճառով ինք ալ ջանք ընէ հանդարտեցնելու Պիլէճիկի Հայերը, հաւատարմով թէ իր Պիլէճիկ վերադարձն անկարելի է եւ պէտք է այլեւս խնդիր հանեն իր անունին շուրջը: Այս խառնակութեանց առթիւ շատ կը քննադատուի տեղւոյն Տ. Սիմոն քահանայն:

ԱՐԱԲԿԻՐԻ Աւաջնորդ ընտրուած է Արմաշու Դպրեւանքին ուսումնապետ Տ. Գարեգին Վ. Խաչատուրեան:

ՀԱՅ ՀՈՐՈՄԵԱԿԱՆԱՅ Պատրիարքարանին կողմէ հոգեւոյս Հայրապետին հոգեհանգստեան առթիւ ցոյց տրուած ձիւն պահութիւնը Մարաշի մէջ այնքան յառապեցութիւն առաջ բերեւ թէ, որ Հայ երիտասարդներ հանրագրութիւն մը պատրաստեան կողմից Հայերու հետ խնամութիւն չհաստատուելու համար: Ուրիշներով սակայն զնուհասելի ջանքեր կ'ընեն ինչպիսիք ծայրայեղութեան շտանկու: Գաւառի մը մէջ ալ որ Հայ կղեր չկայ, Հայ գինուոր մը մնաւ եւ Հայ-հոմէական կղերը մերժեւ է թաղել իր տարրուցութեամբ: Խնդիրը տեղեկագրուեւ է զինուորական իշխանութեանց, որ չափաւանց սպառնելի գտնելով այս խախտը, հարկադրեւ են Հայ-հոմէական կղերը՝ անպատճառ թաղել մնում հայ զինուորը: Բիւզանդիոն կը հաւատայ թէ

կասկածի տակ չէ այս շատ ցաւալի տեղեկութեան ստուգութիւնը:

Տ. ԿՈՄԻՏԱՍ Վ. ի կողմէ հիմնուելիք հայկական երաժշտանոցի գաղափարը, ուրախութեամբ կը լսենք թէ հետզհետէ հաստատութիւն կը դնեն: Մէկ քանի երաժշտութիւն անձնաւորութիւններ խոստացած են ընծայել պէտք եղած աջակցութիւնը, եւ յանձնաժողով մը կազմուած է հետեւեալ անձնաւորութիւններէն: Տեարք՝ Արսէն Արսէնեան, Նզ. Գարակէօզեան, Ասատուծատուր Հարկեց, Մարթէն Յակոբեան, Տք. Թարգման: Յանձնաժողովին գործը պիտի ըլլայ հաւաքել 2000 ոսկի, որ պիտի բաւէ երկու տարուան ծախքին: Այս գումարին կէտը պիտի հայթայթուի համերգներով եւ կէտը նախահաւաքութեամբ, թրքահայերէն եւ արաբահայերէն: Երաժշտանոցը պիտի հիմնուի Բերա, եւ նպատակը պիտի ըլլայ մշակել հայկական սրբաւան երաժշտութիւնը, Հայ լինի՝ գեղջուկ երաժշտութիւնը՝ ձայնական եւ գործիական:

ՀԱՅ ՅԱՄԱՋԻՐԱԿԱՆ ԸՆԴՀ. ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ.— Այս անունով Նիւ Եորքի մէջ 1909 Հոկտ. 22ին հիմնուած է ընկերակցութիւն մը, որուն այս անգամ ստացուած կանոնագրէն կը տեսնուի թէ իր նպատակն է՝ 1. Հայ ժողովրդեան մէջ բարի քաղաքացիութեան պարտւոյ եւ իրաւանց զիտակցութիւնը զարգացնել: 2. Օամբ. բոլոր տարրերուն հետ բարեկամական հասկացութեան եւ եղբայրութեան ոգի մշակել: 3. Պահպանել եւ զարգացնել Հայուն ցեղային ժառանգութիւնները: Այս ընկերակցութեան ազգային-քաղաքական դաւանանքը կարելի է ամփոփել տա նախադասութեան մէջ:— Օամբ. պետութեան անխոս պահանջում եւ ու այս անկեղծ գործակցութիւն թուրք ցեղին հետ, նաեւ Օամբ. տարրերու ինքնաւարտութեան պահպանում: Ետա գեղեցիկ եւ հայրենասիրական նպատակ մը, որուն ուժ տալու պարտական պէտք է զգայ ինքզինքը ունեն ճշմարտապէս զիտակց Հայ: Ընկերութեան մասնաճիւղեր կ'ընան կազմուիլ՝ գործադիր ժողովոյ հաւանութեամբ՝ ուր

որ առհասարակ կօխը անդամներ գտնուին :
Ընկերութեան կեդրոնատեղին է՝ 410 W.
23d St., New-York :

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԸ ԴՆ. օրուան նիստին
մէջ ի նկատ առնելով Կեդր. վարժարանի
ուսմանց ծրագիրը եւ ուսուցիչներուն ցու-
ցակը, որոշեց թաղրիրով մը ներկայացնել
գտնունք Կրթական նախարարութեան, եւ
խնդրել Կեդր. վարժարանին Իսասի (Լիսե)
արձանագրութիւնը :— Պոլսոյ առաջին զի-
ճակով գաղթած երեսփոխանաց տեղ նոր
ընտրութիւններ կատարելու համար Տնտես.
Խորհրդոյ կողմէ ներկայացուած 25 տարին
լրացնող ընտրելիներու ցուցակը նկատի
առնելով, ընտրողներու թիւին աւելցու-
թեան չափով որոշեց որ Խորհուրդ տայ 3
երեսփոխան, Մաքրիկիւղ 7, Այ-Սթէֆանօ
1, Էյուսպ 1, Պէօյլւքտէրէ 2, Սրթապիւղ
2 : Գաղով ընտրութեան պայմանին, այս
մասին օրէնքին դժուած անձնական արժա-
նիքին եւ այլ օրինական պայմաններէն
զատ, հարկ դատեց որ նիւթականի մասին
մինչեւ որ Ազգ. Ժողովն իր որոշումը
տայ, այս անգամ ընտրութեանց մասնակ-
ցելու իրաւունք ունենան այն ամէն ազ-
գայիները, որոնք 1905էն մինչեւ ցարդ-
ի հաշիւ Ազգ. տրոյ գտնէ 25 զրշ. վճարած
ըլլան :— Կրթական խնդրոյն համար
կազմուած մասնախումբը իր անդեկադիրը
պատրաստած եւ ներկայացուցած էր : Ժու-
ղովը որոշեց ուրբաթ օրը (երէկ) Քաղ.
Ժողովին նիստէն ետքը ժամը 2ին գումար-
ուիլ եւ դատել այդ խնդրով :— Ժողովը
հաստատեց Սղերդի եւ Բաքերդի Գուլու.
Ժողովներու ընտրութիւնը :

ԱՄՈՒՄՆԱԼՈՒԹՈՒՄ. — Զմբուհիոյ
Դատաստ. Խորհուրդը լուծեր է ամուս-
նութիւնը Մարգար Կոկպեանի եւ կնոջը՝
Կիւլինայի, որ ապօրէն յարաբերութեան
մէջ գտնուելով ուրիշի հետ, բռնա տար-
ուած էր : Այլն արտօնուած է վերադա-
տնուանալու, իսկ կինը զրկուած է այդ
իրաւունքէն :

Տ. ՄՈՒՇԵՆԸ ԵՊԻՍԿ. Ամերիկոնոյց
առաջնորդ ընտրուած է, նոյն գաղութին
Երեւան. Ժողովին Յունով. 26ի նիստին մէջ,

որ գումարուած էր նախագահութեամբ Տ.
Պօղոս վրդ. Գաֆթանեանի, եւ ի ներկա-
յութեան 5 քահանայ եւ 19 աշխարհական
անդամոց : Առաջնորդը պիտի բնակի Ուս-
գէր : Իսկ Պատգմայիները խոստացած են ե-
կեղեցի մը եւ առաջնորդարան մը շինել :
Ամերիկահայերը որոշած են վերադա-
նալ Պոլսոյ Պատրիարքութեան իրաւասութեան
տակ ուրկէ անջատուած էին բանակադու-
թեան սէփմէն հարկադրուած, եւ Կեդրո-
նին (Պոլսոյ) մէջ ալ երեսփոխան մ'ունե-
նալ : Բայց չի կարծուիր որ իրենց որոշու-
մը կարենայ գործողութիւն : Քանի որ եւ-
րոպական եւ ամերիկեան գաղութները Ս.
Էջմիածնի իրաւասութեան մէջ են, բացի
Պուլկարիայէ եւ Ռումանիայէ, որոնք Պատ-
րիարքարանի հոգեւոր իրաւասութեան տակ
կը գտնուին՝ իրենց մերձաւորութեան պատ-
ճառով : Աւելի անհաւանական է Պոլսոյ
մէջ երեսփոխան մ'ունենալու իրենց իզձին
զոհացումը, քանի որ օտար երկիրներու
հայ գաղութներ իրաւունք չունին երես-
փոխան տալու Թրքահայոց Ազգ. Ժողովին :

ՀԱՅԿ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ
800 սօկի արժողութեամբ կալուածներ եւ
արժեթուղթեր նուիրած է Գահիրէի ծանօթ
ազգայիներէն Տիար Սեդրաք Դաւթեան,
որ հիացիկ նամակով մը գնահատած է նոյն
Միութեան ստանձնած ազնիւ գործը : Տ.
Մուշեղ եպս. հետզհետէ մասնաճիւղեր կը
կազմէ Ամերիկայի մէջ նոյն Բարեգ. Միու-
թեան : Վերջերս Լոնտոնի մէջ ալ մասնա-
ճիւղ մը կազմուած է, եւ հիմնադրաց Ժու-
ղովին մասնակցած են 14 ազգայիներ,
որոնք կարեւոր գումարներ ստորագրած
են : Պրիւսէլի մէջ ալ մասնաճիւղ մը կազ-
մուած է :

“ՏԱՃԱՐ”-Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Մտնուոր ուշադրութիւնը կը հրաւի-
րենք նոր աշխատակցի մը՝ Սաական վար.
դասիսի յօդուածին վրայ :

ՎԵՏԻՆ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆԸ

Բանապետութեան օրերուն հաղածական
ի Պոլիս, Երլարդի մէջ բանտարկուելու

բախտին արժանացած, ողբացեալ տարագիր Տ. Մկրտիչ Եպիսկ. Վեհապետեանի հետ, եւ ազատութեան օրերուն իսկ Հաճընի մէջ շարաթներով արգելափակուած լով իր անկեղծ եւ անկաշկանդ սիրոյն համար առ ժողովուրդն, որուն ցաւերովը կը մարմոքի իր սիրտը, Ստական Վարդապետ ամէնուն ծանօթ եւ համակրելի Տ. Ներսէս Ս. Վ. Դանիէլեանէ, զոր կը յուսանք խմտոյ Եպիսկոպոս անանկ Հայ Ս. Եկեղեցւոյ:

Ն. Գերապատուութիւնը կը խոստանայ Տաճարին բերել իր աշխատակցութեան բաժինը, ինչպէս կ'ընէր երբեմն թերթի տնօրէն-խմբագրին խմբագրութեամբ հրատարակուած Սուրհանդակին մէջ: «Բայց այն տատնուան Ստական Վարդ. եւ թերթերը խմբեր են ու փուշերը միացեր որոնք կը խոցեն ու կ'արիւնոտեն սիրտը, կը գրէ մեզի ուղղուած մտերմական նամակի մը մէջ: Երբեմնի ձեր ճանչցած Սիւռուանայ խօսնակը այժմ աւերներու բուռն է դարձեր, բայց ոչ յուսահատած: Պիտի գրեմ լալքո, ցեղիս տառապանքը, եւ պիտի յուսողրեմ զայն սպրեկու պայկնական հաւատքով, վասն զի ան արժանի է ապրելու»:

Տաճարի էջերը լայնօրէն բաց են Ն. Գերապատուութեան նման սրտազեկեցիկ զրոյի մը առջև: Հայուն տառապանքին մէջ, իրեն նման աննկուն հոգիի մը յուսողրող խօսքերը պիտի կրնան խորունկ եւ բարեբար ազդեցութիւն ունենալ վնասած սիրտերուն վրայ:

ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ ԵՒ

ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐՈՒՆ

Տաճարի Պատ. բաժանորդներուն եւ գործակալներուն հարկ կը համարինք ող. դարարկ թէ բաժնեղիններու առաքումը հնար եղածին չափ փութով պէտք է ի գործ դրուի թերթին տնօրէնութիւնը չհարկադրելու համար յողնեցուցիչ թղթակցութեանց, եւ դիւրապիտ համար ստանձնուած ծանր գործը:

Դրամ զրկելու լաւագոյն եւ դիւրին միջոցն է Մանսա-բօսքը: Ամէնէն պարկէ գումարի համար Մանսա-բօսք կը արուի, եւ բաժանորդը նամակ գրելու իսկ պէտք պէտք չունենար, եթէ կործին վրայ իր ձեռքով դրէ անունը եւ հասցէն՝ ընթեռնելի գրով: Տարբեր միջոցով դրամ զրկուելու ստեն, գանձման յապաղումներ եւ դժուարութիւններ կ'ըլլան, մանաւանդ կը գրանուին խանութպան շահատէրներ, որ յանձնարարուած ամէնէն աննշան գումարին վճարման համար ֆոխսիօն կը պահանջեն!!

* * Բօսքայի փուլ զրկողները պէտք է 20 դրուշի համար 20 դրուշի փուլ զրկին (եւ ոչ 19 դրուշ): Պէտք է մանաւանդ երկու փառանոց փուլ զրկին, որովհետեւ 1 դրուշնոյ եւ այլ փուլերու այնքան պէտք չունինք, եւ փոխելու ալ դժուարութիւն կը յարուցուի:

ՊԱՏԿԵՐԱՑՈՅՑ ՀԱՒԱՔԱԾՈՅ ՄԱՍՆԱՌԻ ՀՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅԻՑ. — Հրատարակեց Ս. Էջմիածնի միաբան եւ Մայր Տաճարի լուսարար Տ. Սահակ Վ. Աստուածատուեան: Հանուր Հայոց Մայր Տաճարին եւ շրջականերու մէջ գտնուած Եկեղ. թանկագին եւ նուիրական հնութեանց, գեղարուեստական զուտ գործոցներու լուստարի պատկերներու գեղեցիկ հաւաքածոյ, որ պէտք է զանաւի ամէն երկեղեցատէրի եւ արուեստասէրի զրազութեան մէջ: Պիտի ամբողջանայ հինգ պրակներով: Ա. Պրակը կը պարունակէ 53 լուստարի պատկերներ յարակից անհրաժեշտ ծանօթութիւններով Գին Մէկ ԲՈՒԲԼԻ, Տղգ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի:

ԱՐՏՈՆԱՏԻՐ

ՀԱՐՍԵՆԱԿ ԳԶՆԵ. ԷԲՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ - ԽՄԲԱԳԻՐ

ԶԱՐԲԱՍԵՐ ԳԶՆԵ. ԵԶՅԻՐՅԱՆ

ՏՊԱՐԱՆ ԴՍԱՆԹ.

Ղալաթիա, ճամի Դաբուսուլթիւ

“ՏԱՃԱՐ,”

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուշ
Արսասահմանի համար	10 ֆրանկ
Ռուսիա	4 ռուբլի
Ամերիկա	2 օլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Տաղը բաժանորդը զանազը իրաւունք ունի մէկ թերթ ձրի ստանալու :

Իսկ չինգ բաժանորդը զանազը պիտի կրնայ մէկ թերթ ստանալ կէս բաժնեգինով :

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ ԵՆ

ՇԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՄԻՆ ԴԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ»-ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ Զարմայր Քանանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիքաշ, Հայոց եկեղեցի

دوسعادتده بشکطاشده اومنى کلیساشنده (داجار) غزتهسى مدیرى پاپاس زارماير

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue « DADJAR »
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

Մ Շ Ա Կ

ԼՐԱԳԻՐ ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆ

Գրիգոր Արծրունիի հիմնած և իր ուղղութեամբ քաջածանօթ սոյն թերթը կը շաբաթական հրատարակուի խմբագրութեամբ ծանօթ զբող Պ. Համբարձում Առաքելեանի, և գործակցութեամբ կարող աշխատակիցներու: Տարեկան բաժնեգին 10 ռուբլի: Թուրքիոյ համար 120 դրշ.: Հասցէ TIFLIS, Redaction du Journal Mschak.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՄԱՐՄՆԱՄԱՐԶ Պատկերազարդ տաճարներ. — Տնօրէն Տեառ Շաւառ Բրիտեան. — Առողջ միտք առողջ մարմնոյ մէջ: Ըշմարիտ խօսք մ'է որ ազգերու իմաստութիւնը կը խտացնէ: Տիար Գրիգորեան շատ կարեւոր պակաս մը կը լրացնէ հրատարակելու ձեռնարկելով մարմնակրթման քի յատուկ ամսաթիւն մը, որ կոչուած է գերազանցօրէն օգտակար դեր մը ունենալ: Տարեկան բաժնեգին 20 դրշ.: Արտասահման 5 ֆր.: Հասցէ՝ Հալեպ խան, քիւ 6 Կալարա:

«ԻՆՆՍՈՒՆ ԵՐԵՐ» . — Վիքթոր Հիւկոյի աշխարհահռչակ գրագէտին գլուխ գործոցներէն մէկը, որ կրնայ Աւետարան մը համարուիլ, եթէ անոր «Թշուառներ»ը Աստուածաշունչ մըն է, ինչպէս ըսած է Թոլսթոյ: Թարգմանութիւն Աւետիս Գումեմեանի, և հրատարակութիւն Պոսթմի Ազգ պատուական շաբաթաթիւններէն: 530 րնդարձակ էջերէ բաղկացեալ հատոր մը: Գին 1 տօլար: Հաթակազմ՝ 1 1/2 տօլար, Փառակազմ 2 տօլար:

ԴՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ, Հ. Եւ Զ. Ասատուրի. Գ. Գիրք, Ա. մաս. Բ. ապագրութեամբ, հիմնովին բարեփոխուած: Հեղինակներուն անունը, և գիրքին Ուսումն. Խորհուրդէն վաւերացուած ըլլալու հանգամանքը պէտք

չի թողուր ուէ յանձնարարութեան: հրատարակութիւն Սիւնեանց զրատան, Սուլթան Համամ, Պաղքըճըլար թիւ 11:

ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

ԲԺԻՇԿ. — Բժեկական առողջապահական ամսաթերթ. — Տէր և տնօրէն Տքթ. Վահան Ղազարեան: Թրքոհայոց մէջ ցարդ զգացուած պակաս մը լեցնելու կոչուող այս օգտակար հրատարակութիւնը արժանի է քաջակրթեան: Առաջին թիւը (Յունվար, 1911) խոստմնալից է իր ճոխ պարունակութեամբ: Տարեկան բաժնեգին 20 դրշ.: հասցէ՝ Տէր. Վահան Ղազարեան, Տրապզոն:

ARMENIA, կը հրատարակուի ի Նիւ-Եօքը, նոյն օգտակար ծրագրով, այն է Հայը քաղաքակիրթ աշխարհին ծանօթացընել, իբրեւ գերազանցօրէն օժտուած ցիւ մը: Վերջին թիւը (1911 Փետրուար) ճոխ և շահեկան է մասնաւորապէս, Տ. Մուշեղեայի Հոգեւոյն Հայրապետին վրայ ունեցած ուշագրաւ գրութեամբ, նաեւ Սունդուկեանցի Քանդուած Օճախի (որ կը շաբաթական), ողբացեալ Պ. Դուրեանի մէկ քերթուածին, Տիկ. Արշակունի Թէոդիկի «Ամիս մը ի Կիլիկիա» գիրքէն սրտայոյզ մէկ քանի էջերու, և Հայ կեանքէ աւանդալէսերու թարգմանութեամբ եւ ուրիշ կարեւոր յօդուածներով: Հասցէ՝ New-York, P. o. Box, 209, Madison Square station.

